Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՆԵՐ ՀԱՆՁՆԵՑ ԲԵՅՐՈՒԹԻ «ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՈՆԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ» ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Մարտի 29-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ շքանշանների հանձնման հանդիսավոր արարողություն: Ամենայն Հայոց Հայրապետը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» բարձր շքանշանով պարգևատրեց Բեյրութի «Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց համախմբումի» ատենապետուհի տիկ. Միմի Հարությունյանին, անդամուհիներ տիկ. Գոհար Խաչատուրյանին, Վեհանույշ-Վեհան Պետիրյանին, տիկ. Ֆրիդա Սարգիսյանին՝ գնահատելով նրանց եկեղեցաշեն ու ազգանպաստ գործունեությունը և Էջմիածնասեր ազնիվ ոգին: Հայրապետական կոնդակի և «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանի էին արժանացել նաև համախմբումի անդամներ տիկ. Արեգ Նազարյանը, Անահիտ Նազարյանը, Վարդուհի Ազատյանը և Սոնա Մարիամ Ալլավերդի Պագալյանը, ովքեր չէին կարողացել անձամբ ներկա գտնվել մեծարման հանդիսությանը:

Բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի միաբան Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը՝ անդրադառնալով «Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց համախմբումի» հիմնադրմանը և կարևորելով վերջինիս դերը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառացման գործում: «Դուք նմանվում եք այն կանանց՝ խնկաբեր կանանց, ովքեր Քրիստոսի Հարության ավետիսը բերեցին աշակերտներին: ...Դուք շարունակում եք նույն այդ առաքելությունը՝ զորավիգ լինելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և Ամենայն Հայոց Կաթողիկոսին»,- նշեց Սրբազան Հայրն իր խոսքում:

Այնուհետև «Էջ Միածինն ի Հորէ» շարականի հանդիսավոր երգեցողության ներքո ներս բերվեցին Հայրապետական Սրբատառ Կոնդակները, որոնցից հատվածներ ընթերցեց Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը:

«Ձեր աստվածահաճո գործունեությունը մեծապես արդյունավետ է եղել «Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց համախմբումի» ծիրից ներս, որտեղ Դուք երկար տարիներ եռանդուն գործունեություն եք ծավալել նախ որպես խորհրդական և հետո որպես փոխատենապետուհի: Ազգօգուտ Ձեր իրագործումներն առավել արդյունավորությամբ շարունակվում են այսօր Կրոնասեր Տիկնանց համախմբումի Ձեր ատենապետության բեղուն շրջանին: Գոհություն և փառք Աստուծո, որ մեր Եկեղեցուն պարգևել է Ձեզ պես հավատավոր ու ծառայասեր զավակներ, քանզի Դուք Ձեր հայրենանվեր և եկեղեցանպաստ գործերով Ամենախնամ Տիրոջ օրհնությունն եք վաստակում Ձեր, Ձեր ընտանյաց և համայն մեր ժողովրդի համար»,- ասվում է Հայոց Հայրապետի Համախմբումի ատենապետուհի տիկ. Միմի Հարությունյանին ուղղված կոնդակում:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

«Դուք երկար տարիներ գովարժան աշխատագործությամբ վարչական զանազան պաշտոններ եք վարել ազգային-բարեսիրական և մշակութային տարբեր հաստատություններում՝ Ձեր գործունեության տարիներին դրսևորելով մեծ նախանձախնդրություն ու նվիրում հանդեպ մեր սրբազան արժեքները, մեր Սուրբ Եկեղեցին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Մենք ծանոթ ենք Ձեր եկեղեցասեր ծառայությանն ու Ձեր բարեսիրական, ազգանվեր գործունեությանը: Հայաստանում Ձեր գտնվելու օրերին գոհաբանական աղոթասացությամբ կատարվելու է օծումը Լեռնակերտի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու, որը վերանորոգվել է Ձեր ազնիվ նվիրատվությամբ»,- ասվում է տիկ. Գոհար Խաչատուրյանին ուղղված Հայրապետական կոնդակում:

«Ուրախությամբ ենք անդրադառնում, որ Ձեր գովարժան գործունեության տարիներին Դուք մեծ նպաստ եք ունեցել Կրոնասեր Տիկնանց համախմբումի եկեղեցաշեն գործերում՝ կարևոր ավանդ բերելով Առաքելական մեր Մայր Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շինությանն ու պայծառությանը»,- մասնավորաբար ասվում է տիկ. Վեհանույշ-Վեհան Պետրոսյանին ուղղված Հայրապետական կոնդակում:

«Դուք, երկար տարիներ Կրոնասեր Տիկնանց համախմբումին անդամակցելով, եկեղեցաշեն առաքինի գործերով կարևոր ավանդ եք բերում Առաքելական մեր Մայր Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շինությանն ու պայծառությանը և Ձեր գովարժան գործունեության ընթացքին նաև զգալի նպաստ եք ունեցել լիբանանահայ համայնքում հոգևոր-մշակութային կյանքի աշխուժացմանը»,- ասվում է տիկ. Ֆրիդա Սարգիսյանին ուղղված Հայրապետական կոնդակում:

Պարգևների հանձնումից հետո երախտագիտության խոսքով հանդես եկան օրվա մեծարյալները՝ իրենց պատրաստակամությունը հայտնելով նույն ոգով ու նվիրումով շարունակելու իրենց ծառայությունը Հայ Եկեղեցուն և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: «Մարդու կյանքի ընթացքին օրեր կան, որոնք արդյունավորում են իրենց ապրած տարիները: Սա այդ օրն է: ...Հաճեցեք, Վեհափառ Տեր, ընդունել մեր անմնացորդ նվիրումը հայոց հավատքի, լույսի և հույսի փարոս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին»,- նշեց տիկ. Միմի Հարությունյանը:

Ներկաներին իր Հայրապետական օրհնության ու գնահատանքի խոսքն ուղղեց նաև Ամենայն Հայոց Հայրապետը՝ բարձր գնահատելով համախմբումի նվիրյալ անդամների հավատարմությունը հանդեպ Ս. Էջմիածինը, բարեգործության ոգին ու հավատի գործերը, որ շենացնում են Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին:

«Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց համախմբումի» բարեջան անդամներն ավելի քան քառասուն տարիներ, Էջմիածնի սերը իրենց հոգում ծրարած, իրենց ծառայությունն են բերել Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն, մասնավորաբար՝ Միածնաէջ Մայր Աթոռին: Այստեղ ներկա հոգևորականներից յուրաքանչյուրը զգացել, ապրել և տեսել է ձեր հոգու ջերմությունը, ձեր սերն ու նվիրումը՝ գործերով արտահայտված: Տակավին Վազգեն երանաշնորհ Հայրապետի շրջանին հաճախ լսել ենք ձեր մասին, ձեր զորեղ հավատի, Ս. Էջմիածնի հանդեպ ունեցած ձեր հավատարմության և ձեր ազնիվ, եկեղեցաշեն, հայրենանվեր գործերի մասին: Եվ այսօր գոհություն ենք հայտնում Տիրոջը, որ Հայրապետներին վերապահված ուրախությունն ամենառատ դրսևորումով որպես շնորհ վերապահեց Մեզ,

որպեսզի Մենք, ի փոխան մեր լուսահոգի Հայրապետների, Մեր գնահատանքի զգացումներով ձեր կուրծքը զարդարենք մեր Եկեղեցու բարձր պարգևով:

...Մենք վստահ ենք, որ Էջմիածնասիրությունը պիտի քայլի անբաժան կերպով մեր ժողովրդի զավակների հետ՝ միշտ լուսավոր պահելով նրանց հոգին և այդ հոգու լույսից փոխադարձաբար ջերմություն բերելով մեր Սուրբ Եկեղեցուն, մեր նվիրական Մայր Աթոռին»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում՝ մաղթելով նույն նախանձախնդրությամբ շարունակել իրենց ծառայությունն ի սեր Մայր Աթոռի պայծառության և Հայ Եկեղեցու զորացման:

Հանդիսությանը գեղարվեստական կատարումներով հանդես եկավ հնագույն երաժշտության «Տաղարան» համույթը:

***

Նույն օրը, առավոտյան, Շիրակի թեմի Լեռնակերտ գյուղում, ձեռամբ Շիրակի թեմական առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի, օծվեց 5-րդ դարի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, որ վերանորոգվել էր Բեյրութի «Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց համախմբումի» անդամ տիկ. Գոհար Խաչատուրյանի ազնիվ նվիրատվությամբ: Հավարտ օծման արարողության առաջնորդ Սրբազան Հայրը մատուցեց նաև Ս. Պատարագ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ